

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂՆԵՐԸ

Անահիտի նախորդ թիւի քրոնիկին մէջ յիշատակած էի Երեւանի մէջ յայտնուող երիտասարդ ու վառ տաղանդով բանաստեղծի մը, Յովհաննէս Շիրազի «Սիամանդօ եւ Խջեղարէ» ընդարձակ վիպերգը եւ «Գարնանամուտ» տաղերու հաւաքածուն: Հիմայ, Գրական Թերթի վերջին թիւին մէջ կը գտնեմ ուրիշ նոր ու քնքուշ բանաստեղծի մը անունը, Վ. Պետեան, «Գարնանային Երգ» տիտղոսով թարմ ու արե-

ւալից տաղի մը վերեւ: Այս վերջին տաղը, որ քերթողական նոր ու յուսատու տաղանդի մը ծագումը կ'աւետէ, կ'արտատպեմ ստորեւ, Յովհ. Շիրազի նոյն լուսաւոր ներշնչմամբ եւ աւելի եւս հասուն ու զօրեղ ոճով մէկ տաղին հետ: Ասոնք իրական բանաստեղծութեան էջեր են, Հայաստանի բնիկ միջնորդարին մէջ երիտասարդ սիրտերու խորին ու ինքնեկ թրթռացման արդիւնք կենսախայտ երգեր: 2.

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՐԳ

Ինչպէս լեռներից ծաղկափունջ պարգես,
Յըրես դաշտերում, աղբիւրների մօտ,
Ինչպէս աշխարհը կանաչ հագցրես, —
Այդպէս նա եկաւ, գարունն ազմրկոտ:

Ջրերին տընց երգեր կարկաչուն,
Եւ արօտներին գոյներ նրբագեղ.
Ինչպէս մի ազիկի սիրով գարդարուն՝
Մըտաւ ամէն սիրտ, շրջեց ամէն տեղ:

Եւ արեւն՝ ինչպէս իր սերն առաջին՝
Տընց ջրերին, հողին ու մարդուն,
Քնքուշ մատներով փարեց կանաչին
Արտուտի քեւով նախրեց մեր հանդում:

Գարունն իմ բոյրն է, իմ սերն է գուլալ,
Նա ինձ բերել է յոյս առաւօտներ,
Գիշերներ կապոյտ եւ աստղերու փայլ,
Եւ երգի համար քրոնիչ ու քեւեր:

Նա ինձ ասում է, յորդորում է խոր,
Որ երգեմ կեանքը, հողը բեղմնաւոր,
Նա ինձ ասում է՝ Տե՛ս, արեւաւոր
Քաղաքում, գիւղում կեանք են կառուցում:

Օ՛, գարուն, բո՛յր իմ, իմ լա՛ւ բարեկամ,
Սիրտըս խրվում է այս կեանքի համար.
Աշխարհում քանի ապրում եմ ու կամ,
Երգես կը հնչի այս կեանքի պէս վառ:

Վ. ՊԵՏԵԱՆ

ԼՅԻՈՒՄ Է ՀՈԳԻՍ ...

Լցում է հոգիս անհուն բերկրանքով,
Գարնան ծիծառն է կրծքիս տակ երգում.
Արծաթ գետակի մարմանդ աղմուկով՝
Սարեակն է բերկրում ...

Ամուր գրկել է լեռների շղթան
Մանիշակագոյն շրջաբշն ամպերի.
Ցածում արօտներ — կանաչ տեսարան,
Ծովերն արտերի:

Լըսում եմ ահա ձայները նըրանց,
Միտքս նախրում է երկաթի փայլով.
Վեր է սըլանում հոգիս քեւաբաց —
Հողի բերկրանքով ...

Այնտեղ, երկաթի զնգոցը ահա՝
Հնչում է որպէս մի զանգակաղբիւր,
Եւ ջուրն է փուռում մեր հանդի վըրայ
Որպէս վառ համբոյր ...

Եւ արեւն ինչպէս մայր գորովագութ՝
Գըրկել է լեռներ, ձոր, դաշտեր ու ծով.
Հովն է քեւածում եւ անցնում գանգուր
Արտերի միջով:

Եւ ես երգում եմ նոր կեանքի փայլող,
Գարունն է իմ մէջ ծիծաղում ահա,
Ըզգում եմ նըրա ուժը կենսաբով
Եւ սըրտիս վըրայ ...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ